ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

2010թ Դեկտեմբերի 22-ի № 43-Ն

# ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հայաստանի օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածները.

*համայնքի ավագանին որոշում է՝*

1. Առինջի համայնքի տարծքում 2011 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը , համաձայն հավելվածի :

կողմ -9 դեմ – 0 ձեռնպահ - 0

| | | | |
|---|---|---|---|
| ---------- | ---------- | ----------- | Նելլի Մխիթարյան |
| ---------- | ---------- | ----------- | Ջուլետտա Ալեքսանյան |
| ---------- | ---------- | ----------- | Հայկ Թադևոսյան |
| ---------- | ---------- | ----------- | Արամ Սեդրակյան |
| ---------- | ---------- | ----------- | Սամվել Ծառուկյան |
| ---------- | --------- | ---------- | Արշալույս Անտոնյան |
| ---------- | ---------- | ----------- | Արա Միքայելյան |
| ---------- | ---------- | ----------- | Գեղամ Մանուկյան |
| ---------- | ---------- | ----------- | Առաքել Խաչատրյան |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

2010թ.դեկտեմբերի 22
գ.Առինջ

| | | | |
|---|---|---|---|
| | Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | 1500-17500 դ. | 2500դ. |
| | Համայնքի տարածքում՝ | | |
| ) | բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար՝ | 350դ. | 350դ. |
| ) | հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում վառեիքի, տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝ | 150000-200000դ. | 150000դ. |
| 3) | համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար յուրքանչյուր տարվա համար | 50000դ. | 50000դ. |
| 6. | համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերին վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները(սաունաները), խաղատները՝ ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | | |
| 1) | առևտրի օբյեկտների համար | 25000-50000դ. | 25000դ. |
| 2) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 50000-100000դ. | 50000դ. |
| 3) | բաղնիքների (սաունաների) համար | 200000-500000դ. | 200000դ. |
| 4) | խաղատների կազմակերպման համար | 500000-1000000դ. | 500000դ. |
| 5) | շահումով խաղերի կազմակերպման համար | 250000-500000դ. | 250000 դ. |
| 6) | վիճակախաղերի կազմակերպման համար | 100000-150000դ. | 100000դ. |
| 7. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի համար՝ | | |
| 1) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1000-2000դ. | 1500դ. |
| 2) | թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ | 2500-3000դ. | 3000դ. |
| 3) | այլ արտաքին գովազդի համար՝ | 500-1500դ. | 1000դ. |
| 4) | Դատարկ գովազդային վահանակների համար՝ | 0-700դ. | 700դ. |
| 8. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար՝ | 0-10000դ. | 2000դ. |
| 9. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու(բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար | 0-10000դ. | 10000դ. |
| II | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ | | |
| 1. | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 15000դ. |
| 2. | Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինման և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխ հատուցման վճար | | 4000դ. |
| 3. | Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | | 3000դ |

Առինջ համայնքի ավագանու
2010թ. դեկտեմբերի 22-ի
թիվ 43- Ն որոշման

# ԱՌԻՆՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ)հ | Տուրքերի տեսակները | Օրենքով սահմանված դրույքաչափերը | Ավագանու սահմանած դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղական) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ | | |
| | հիմնական օբյեկտների համար՝ | | |
| 1) | մինչև 300քմ. Ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական(ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200քմ. ընդհանուր մակերես ունեցող հասարակական արտադրական նշանակության օբյեկտների համար՝ | 0-15000դ. | 15000դ. |
| 2) | սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | | |
| ա. | 201-ից մինչև 500քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-30000դ. | 30000դ. |
| բ. | 501-ից մինչև1000քմ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-50000դ. | 50000դ. |
| գ. | 1001քմ. և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-70000դ. | 70000դ. |
| 1.2 | ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | | |
| 1) | մինչև 20քմ.ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-3000դ. | 3000դ. |
| 2) | 20քմ.և ավել ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ | 0-5000դ. | 5000դ. |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի)համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով | | |
| 1) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, սենքերի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն | 3000դ. | 3000դ. |
| 2) | բացի օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, սենքերի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմեր՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով | | |
| 3) | Նախատեսվում և միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերին ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն հավելվածի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարաության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը | | |
| 3. | Համայնքի տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլվության համար | 5000դ. | 5000դ. |
| 4. | Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | | |
| 1) | Ոգելից խմիչքի վաճառքի թույտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական | 0-17.500 դ. | 2500 դ. |